

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

«ՀՈՂԱՅԻՆ ՏՈՒՐՔԸ» ԵՒ ՀԱՐԿԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

ԳԼ. V

«Ծխահարկի» սկզբունքի ազդեցութիւնը գիւղերի հարկի բաժանման արդարացի սովորութիւնների քայքայման նկատմամբ: Հարկերի անհաւասար ծանրանալը ունեւորների և հոնեւորների վրայ: Օրինակներ Կովկասի զանազան շրջաններից: Դրամական տուրքի թույլ կողմերը: «Կողմնակի» տուրքերի ուժեղանալը:

Արեւելեան տուրքային կովկասի թրքական շրջանում, ինչպէս և խառը թուրք-հայկական (Գանձակի և Բագուի նահանգներում) տուրքի ենթարկուող օրեկտը կազմում է «գլխի» (աշխատաւոր տղամարդու), «տունը», անասունը, վարելահողը, այգիները: Հայ գիւղերում, իբրև հողագործների, «գլխի» հետ միասին հաշւում են և վարելահողը, այգիները: Մեծ մասամբ խաչնարածութեամբ պարապող տուրքերը «գլխի» հետ միշտ հաշւում են և անասուններին: Շամախի գաւառի թափառաշրջիկ Արար-Շահվէրդի գիւղում, օրինակ, ամեն ծխից վերջնում են 5-ականս., իսկ մնացած տուրքը բաժանում «կարա»-ի հաշուով: Մի «կարան» համապատասխան է 40 ոչխարի, 8 մեծատաւարի, 4 ձիու, 1 փոքր ուղտի, $\frac{1}{2}$ մեծ ուղտի, $\frac{1}{2}$ աշխատող տղամարդու և այլն...

Նուրսու գաւառում և այլ շրջաններում, ուր մեծ նշանակութիւն ունի այգեգործութիւնը, տուրքի խոշոր առարկայ են այգիները իրանց տարածութեան, ստացուող բերքի, կամ կենդանացուող չերամի սերմի քանակութեան համեմատ:

Հողագործ հայ և վրաց շրջանում (Երևանի, Թիֆլիսի նահանգներում) հարկային ձևը ենթակայ է հողական կարգերին: Բայց քանի որ համայնական հողատիրական սկզբունքի համաձայն բաժանման են ենթարկւում հողերի մի մասը—վարելահողերը և խոտամարգերը—դրա համապատասխան ձևով էլ կատար-

ւում է և հարկերի բաժանումը: Մեծ մասամբ հողը և մարգերը բաժանւում են համփա-չարէքի, կամ—ինչպէս վրաստանում են ասում—լիտրա-չարէքի սկզբունքի հիման վրայ: Համփա-չարէք սկզբունքի էութիւնը կայանում է նրանում որ գիւղի կողմից ընտրեալների միջոցով ընտանիքները բաժանւում են զանազան կարգերի, իրանց աշխատաւորների, լծկանի թուերի և առհասարակ ապրուստի համեմատ: 3—4 տղամարդ, 7—8 լուծ եղն ու Կոմէշ, 100—200 ոչխար ունեցող ընտանիքը հաշւում է իսկական համփա (լիտրա) ընտանիք, դրա կեսի չափ ոյժ—կարողութիւն ունեցող ընտանիքը հաշւում են կէս համփա, կամ 2 չարէք և այլն. կան ընտանիքներ որ $1\frac{1}{2}$, նոյնիսկ 2 համփա են, և ընդհակառակը վերջերս երեսայել են նոյն իսկ $\frac{1}{2}$ չարէք, կամ համփի $\frac{1}{8}$ ուժով ընտանիքներ (պճեղ), նոյն իսկ համփի $\frac{1}{16}$ -ական մասը:

Յիշուած հայ-վրացական հողագործ շրջանի համփա-չարէքական սկզբունքով ղեկավարւում են նոյնիսկ և հայ-վրացական շրջաններում ապրող հողագործ թուրքերը ինչպէս և հայերի մէջ ապրող յոյները, եգիպտացիները:

Իայց պատահում է և հակառակը:

Չուտ հողագործ հայ-վրացական շրջանում կան գիւղեր, ուր համփա-չարէքական սխտէմը փոխարինուել է ուրիշ աւելի անարդարացի ձևով—ծխի, հոգիի վրայ և այլն. պ. Մաչաբելիի ասելով վրացարձակ Գորուայ գիւղերը բաժանւում են 4 կարգի՝ գաւառում հարկերի ձևերի բաժանուելու վերաբերմամբ. 1) 27 գիւղի բոլոր տուրքերը (արքունական և գիւղական) բաժանւում են կարողութեան վրայ (լիտրա-չարէքի սկզբունքով), 2) 26 գիւղի արքունական հարկերը բաժանւում են կարողութեան վրայ, գիւղական ծախսերը—հաւասարապէս բոլոր ծխերի, 3) 4 գիւղում արքունական հարկերը բաժանւում են ծխի վրայ, գիւղական ծախքերը կարողութեան վրայ և 4) 66 գիւղի բոլոր հարկերը (արքունական և գիւղական) բաժանւում են հաւասարապէս բոլոր ծխերի վրայ:

Ընդհակառակը, հողագործ չուտ հայկական Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի, Նոր-Բայազէթի գաւառներում, ինչպէս և հարևան տեղերը հարկերի բաժանումը անխախտ կախում է հողի բաժանումից. հարկերը վճարւում են հողի տարածութեան համեմատ: Մեծ մասամբ ի նկատի են առնւում վարելահողերը և խոտհարքները: Լաւ եկամուտով հողերը գնահատւում են աւելի բարձր և հակառակը. օրինակ, Ախալքալաքի գաւառի Գիւմուրդա գիւղում աղբած հողերի մէկ չափը հաւասարւում է միւս հողերի 2 չափին, Մեծ Արակոյա գիւղում 20 կոդ աղբած

հողը հաւասար է 30 կող միջակ հողին և 40 կող սարի հողին... Հողատիրական ձևի փոփոխութեան հետ միասին փոխոււմ է և հարկային ձևը: Դրանով է բացատրուում այն հանգամանքը, որ վերջի ժամանակներս հայկական չրջաններում հարկային սխաւտեմը հողատիրականի հետ միասին համփա-չարէքի սկզբունքից վերածոււմ է «ջանի» (անձնաւորութեան) սկզբունքի:

Այս ամենատարածուած ձևերից մենք ունենք և չեղուններ դէպի երկու հակառակ կողմեր: Այն տեղերը, ուր հողատիրական ձևը համայնականից փոխուած է անհատականի, կամ մօտ է այդ փոփոխութեան, ուր անտեսութիւնը միատեսակ է, ուր չը կան ուժեղ տրագիցիաներ և ուր թոյլ է ժողովրդի գիտակցութիւնը—տուրքերը սկսում են բաժանել ծխի վրայ: Այդ դրութեան մէջ է Քուլթայիսի նահանգի գիւղերի մեծամասնութիւնը, Թիֆլիսի, Սոնխիսի գաւառների ուսաց, գերմանացոց գիւղերը հարևանների հետ և երկրի այս ու այն անկիւնում ընկած թուրք հայ, յոյն հատ-հատ գիւղերը:

Ընդհակառակը, ուր համայնական հողատիրութիւնը ուժեղ է, ուր բարդ է անտեսութիւնը, ուր մանաւանդ տրագիցիաներին օգնութեան է հասնում զարգացումը, գիտակցութիւնը և գիւղական ինտելլիգենցիայի աջակցութիւնը—հարկային ձևը մնում է հինը (կարողութեան վրայ) և նոյնիսկ աւելի անարգարացի հիմքերից անցնում է այդ ձևին: Շամախի գաւառի Դեկման, Խաթման, Գաջման թաթերի գիւղերում բնակիչները բաժանուած են 6 կարգի, 1,2,3,4,5 և 6 շահի անունով: 6-որդ շահի դասակարգի ընտանիքը վճարում է 3 անգամ աւել քան 2 շահի դասակարգի ընտանիքը և 6 անգամ աւելի մէկ շահանոցից: Նոյն գաւառի Բասխալ գիւղում, ժողովրդի անտեսական դրութեան անկման պատճառով, ամբողջ հասարակութիւնը բաժանուած է 24 զանազան կարգերի «ստիլի» անունով՝ 1 ստիլից մինչև 24 ստիլ...

Սոնխիսի գաւառի Բօդբէօ-Չուրաբաանի վրաց գիւղում աշխատողի, հողի և անասունների հաշուով, ամենահարուստ ընտանիքը վճարում է բոլոր տուրքեր 90 ուրլուց աւել, այն ինչ կան աղքատներ, որոնց վճարելիքը հազիւ հասնում է մի քանի ուրլու:

Ախալքալաքի գաւառի բարդ, բաղմակողմանի և ինտենսիւ կուլտուրա ունեցող Խրթըզ մահմեդական գիւղում չը նայած բոլոր հողերի բաժանուած լինելուն, բարդ ու արդարացի է նաև հարկային ձևը: Խրթըզի հարկային ձևը, ասում է այդ գաւառը հետազօտող պ. Վերմիչեվը, իրան նպատակ ունի եկամուտի

բոլոր աղբիւրները, ընդունելով ամենատարգարացին՝ որ եկամտի 100% վերցնուի իբրև տուրք յօգուտ հասարակութեան: Այս հիման վրայ ամեն մի կովից տուրք վերցնուած է 2 կոպ., լծկանից 20 կ., ձիուց 50 կ., էջից 20 կ., ոչխարից 10 կ., մեղուի փետակից 30 կ., մէկ քար ունեցող ջրաղացից 6 ուռլի, խանութից 3 ուռլի, այգիներից ամեն տարի որոշուող ու գնահատուող եկամտի 100%-ը... Այսչափ մանրակրկիտ և արգարացի են գիւղացիք տուրքը բաժանելիս և մի քանի հայ գիւղերում, ուր ինտենսիւ ու բազմակողմանի է երկրագործական կուլտուրան: Այդպիսի գիւղերի շարքումն են Նուխուայ գաւառի Վարթաշէն գիւղը, Զանկեագուրի Մեղրին և ուրիշները...

Ինչպէս վերը ասացինք, գիւղական սովորութիւնները (հարկերի բաժանման վերաբերմամբ) մշտական չեն. նրանք համաձայնուած են ժամանակի տիրապետող ոգու հետ, փոխուած են, երբ փոխուած է մարդկանց աշխատահայեցողութիւնը ու գիւղական տարրեր շահերով մրցող խմբակների հաւասարակշռող ոյժը: Տարաբախտաբար «ժամանակի ոգին» չի տանում դէպի հաւասարութիւն:

50 տարի շարունակ գոյութիւն ունեցող «ծխահարկի» սկզբունքը հալածակ էր արդարութեան, և այդ անարդար սկզբունքը կարողացաւ գիւղերի մէջ գոյութիւն ունեցող սովորութիւնները ուղղել դէպի վատը, դէպի այն, որ թոյլ աւելի թուլանայ, իսկ ուժեղը աւելի ուժեղանայ: Ստեղծուած անարդարութեան աստիճանը պարզելու համար ես ինձ թոյլ կը տամ բերել այստեղ երկրի զանազան շրջանների տիպիքական ընտանիքների բիւզջէներից (ստացած-ծախսուածից) մի քանի օրինակներ:

Նոր-Բայազէթի գաւառի հայաբնակ Կուլայի գիւղում, որ պ. Պարվիցկու *) անելով կարելի է տիպիքական համարել հայաբնակ գաւառի համար, հարուստ, միջակ և աղքատ ընտանիքների բիւզջէն ինչպէս և վճարելիք տուրքերը հաւասար են.

Որ դասակարգի ընտանիքներ:	Ընտանիքի անդամների թիւը:	Վարելա- հողի տա- րած. գե- տեատ.	Գոյքը (շինութ. անասուն. կահ-կար. արժէքը) ա.	Տարե- կան եկա- մուտը ա.	Տարե- կան ծախ- սը ա.	Զուտ արդ. կամ ֆնսսը(—) ա.	Վճա- (+) րելիք տուր- քը ա.
Հարուստ	13	121	2,948	1,353	1,231	+122	210

*) Материалы по изуч. экономич. быта Госуд. кр-янь За-
кавказ, т. I, стр. 350—362.

Միջակ . . .	7	5 ₂	738	318	267 + 51	980
Աղքատ . . .	6	4 ₂	20	40	45 — 5	750

Եթէ մենք հաշուենք թէ ինչ $\frac{0}{100}$ է կազմում վճարելիք տուրքը կարողութեան կամ ստացուող եկամուտի համեմատ, ինչպէս նաև այն թէ ինչքան է տուրքը մի անձնաւորութեան վրայ, կ'ստանանք.

Ինչ դասակարգի ընտանիք:	Հոգիի վրայ n.	$\frac{0}{100}$ ամբողջ կարողութեան	$\frac{0}{100}$ ստացող եկամուտի:
Հարուստ .	1 ₆₁	0.70/0	15.0/0
Միջակ .	1 ₄₀	1.30/0	31.0/0
Աղքատ .	1 ₂₅	37.50/0	188.0/0

Այսինքն, չը նայած նրան որ աղքատի ամբողջ կարողութեանը (չինութիւն, անասուններ, կահ-կարասիք) (20 n.) 36 անգամ ավելի պակաս արժէ—քան միջակ ընտանիքի կարողութեանը (735 n.) և 47 անգամ պակաս քան հարուստ ընտանիքի կարողութեանը—բոլոր դասակարգի ընտանիքների վճարելիքը համարեա նոյնն է՝ հարուստինը 1₆₁ n. հոգուց, միջակին—1₄₀, աղքատին 1₂₅ n.: Աւելի մեծ է տուրքերի տարբերութիւնը, եթէ ի նկատի ունենանք զանազան դասակարգի ընտանիքների կարողութիւնն ու սպառած եկամուտը:

Կուլալի գիւղը բացառութիւն չէ կազմում Նոր-Բայազէթի գաւառի միւս գիւղերի մէջ և հարկատուութեան վերաբերմամբ նրա մէջ գոյութիւն ունեցող անարդարութիւնը ընդհանուր է հայ գիւղերի ահագին մեծամասնութեան համար: Ղազախի գաւառում տեղի ունեցող հարկատրութեան արդարութեան կամ անարդարութեան աստիճանի մասին որոշ գաղափար տալու *), ինչպէս և գաւառում բնակուող զանազան ազգաբնակչութիւնների կենցաղավարութիւնը պարզելու համար պ. Երիցեանը բերում է միայն երկու տեսակ ընտանիքների բիւզճէներ՝ ունևոր և չունևոր:

Բացի զրանից, գաւառի լեռնային, միջակ և դաշտային գոտիների տարբերութիւնները պարզելու համար նա վերջնում է առանձնապէս ընտանիքներ լեռնային, միջակ և դաշտային գոտիներից: Լեռնային գոտին նկարագրելու համար նա վերջնում է ռուս գիւղացիների ընտանիքներ (Միխայլովկա գիւղից), միջին գոտու համար հայ գիւղացիներին (Կողբ գիւղից), դաշտի համար—Թուրք գիւղացիներին (Գեշալի գիւղից): Այդ տիպիքա-

*) Материалы по Изуч. Экон. быта Госуд. крестьянъ Закавк.
т. II.

կան ընտանիքների բիւզջէն կազմուած է հետեալ գլխաւոր մասերից.

Ինչ գօտիի գիւղացի:	Ընտան. ան- դամների (+)	Հողերի տա- րածութ. դասեաւ. աղբի. վարե- լահող.	Կարողու- թեան ակ- թէքը.	Եւ- ծարկեալ կամուտը.	Ծարկեալ ն.	Ծախսերը. ն.	Զուտ եկա- մուտը. ն.	Վճարելիք տուրք. ն.
Ունեւոր գիւղացիներ:								
Լեռնային (ոռւս)	14	—	44	4,582	1,697	1,624	173	32 ₂
Միջակ (հայ)	10(8)	1/2	7	4,345	2,111	1,937	174	53 ₃
Դաշտ (թուրք)	8(6)	1	24	5,795	3,666	3,485	181	770/0
Զբաւոր գիւղացիներ:								
Ռուս (լեռնային)	5	—	1	291	230	260	—30	32 ₂
Հայ (միջ. գօտի)	3	1/4	15	284	167	172	—73	120
Թուրք (դաշտի)	3	—	—	54	65	70	—50	16 ₅

Հարկերի ծանրութեան չափը պարզելու համար հետաքրքր-
քիր է հաշուել տուրքի քանակութիւնը մի հոգու, ամբողջ կա-
րողութեան և տարեկան ստացուածքի վրայ, որոնք հաւասար են՝

Ինչ գիւղացու	Հողի վրայ	0/0 կարո- ղութեան.	0/0 ստաց- ուածքի.
Ունեւոր գիւղացիների:			
Ռուս (լեռնային գօտ.)	230	070/0	190/0
Հայ (միջին գօտիի)	533	129/0	25
Թուրք (դաշտի)	963	130/0	2
Զբաւոր գիւղացիների:			
Ռուս (լեռնային գօտ.)	644	1110/0	140/0
Հայ (միջին գօտիի)	400	420/0	720/0
Թուրք (դաշտի)	550	3060/0	2540/0

Զը նայած ունեւորների ու չքաւորների կարողութեան ա-
հագին տարբերութեան (15, նոյն իսկ 100 անգամ), նրանց
վճարելիք տուրքերի քանակութիւնը համարեա նոյնն է: Հայ և
թուրք գիւղերում հարուստների վճարելիքը 53—96 ուրբի է
հոգու վրայ, աղքատներինը 40—55 ուրբի: Ռուս գիւղում աղքատ
ընտանիքը նոյն իսկ աւելի է վճարում, քան հարուստը (64 ու
23 ուրբու տեղ):

Հաշուելով կարողութեան և եկամտի վրայ, տուրքի
ծանրութիւնը աւելի մեծանում է.

Կարողութիւնից ունեւորները վճարում են	07, 12, 130/00/0:
» չքաւորները »	111—42, 3060/0:

Եկամուտից ունեւորները վճարում են 1⁰, 2⁵, 21⁰/₀0:

» չբաւորները » 14₀, 7₂, 25⁰/₄0:

Ամենամեծ անարդարութիւնը նկատուում է թուրքերի մէջ, յետոյ ուսնների, իսկ վերջը հայերի:

Նոյն անարդարութիւնը մենք տեսնում ենք և վրացիների ու միւս ազգերի մէջ: Սղնախի գաւառի Բօզքէօ-Չուրաբաանի վրաց նահապետական գիւղի հարուստ, միջակ և աղքատ տիպիքական ընտանիքների բիւջէները հաւասար էին *).

Ընտանիքների կարգեր:	Ընտանի- քի ան- դամների թիւը:	Կարո- ղութ. արժէ- քը:	Ցարեկ. եկա- մուտը:	Ցարեկ. ծախ- սը:	Զուտ ե- կամուտը (+) կամ վնասը (-):	Տուր- քերը:
	ա.	ա.	ա.	ա.	ա.	ա.
Հարուստ	28	10,215	8,222	4,433	+ 3,789	230
Միջակ	14	1,817	1,492	1,251	+ 241	104 ₄
Աղքատ	4	22	137	167	— 31	14 ₂

Հաշուելով տուրքի քանակութիւնը միջակ անձնաւորու-
թեան, կարողութեան և եկամուտի վրայ, մենք կը տեսնենք որ
տուրքը կազմում է.

Ընտանիք. դասակարգեր:	Հոգու վրայ:	Կարողու- թեան 0/00/0:	Եկամուտի 0/00/0:
Հարուստ	822	23 ⁰ / ₀	28 ⁰ / ₀
Միջակ	746	57 ⁰ / ₀	70 ⁰ / ₀
Աղքատ	455	645 ⁰ / ₀	104 ⁰ / ₀

Նոյն Սղնախի գաւառի Նովօ-Ալեքսանդրով հայ-ուս
գիւղի տիպիքական ընտանիքների բիւջէներն են.

Ընտանիքների կարգեր:	Ընտանիքն. անդամն. թիւը:	Կարողութ. արժէքը.	Ց ա Ր Ե Կ ա ն.	Տուրք.
	ա.	ա.	ա.	ա.
Հարուստ	7	4,303	2,049 1,388	+ 661 77
Միջակ	6	9,444	919 878	+ 41 57
Աղքատ	6	149	313 289	+ 24 42

Տուրքի քանակութիւնը անձի, կարողութեան և եկամու-
տի վրայ կը լինի.

Ընտանիքների դասակարգեր.	Անձի.	Կարողութ.	Եկամուտի
	ա.	0/00/0:	0/00/0:
Հարուստ	110	18 ⁰ / ₀	38 ⁰ / ₀ :
Միջակ	96	40 ⁰ / ₀	63 ⁰ / ₀ :
Աղքատ	70	28 ⁰ / ₀	140 ⁰ / ₀ :

*) Материалы по изуч. Экон. быта Госуд. кр. Сигн. уѣзда.

Բերած օրինակներից ակներև է, որ Կովկասի գիւղերի մեծամասնութեան մէջ հաստատուած է ներկայումս մի այն տեսակի դրութիւն, որ աղքատ գիւղացին միջանի անգամ աւելի է ծանրաբեռուած հարկերով, քան միջակ կարողութեան և եկամուտի տէրը, իսկ միջակը շատ աւելի, քան հարուստը:

Այդ անարդարութեան պատճառը, անկասկած, կայանում է նրանում, որ հարկերը միմեանց մէջ բաժանելիս գիւղացիք ղեկավարուած են ոչ թէ կարողութեան կամ ստացող եկամուտի սկզբունքի լայն մտքով, այլ այդ կարողութեան ու եկամուտի միմիայն մի ճիւղով: Նոր-Բայազէթցիք տուրքը գցում են վարելահողի համեմատ, չը նայած որ եկամուտի արդիւնք են և արօտները, որոնք միմիայն հարուստ խաշնարածների ձեռքին են, չը նայած որ մեծ եկամուտներ ստանում են ջաղացատէրերը, գիւղի վաճառականները և այլն: Ղազախցիք տուրքի են ենթարկում միմիայն աշխատողի, վարելահողի համեմատ, չը նայած որ անագին եկամուտ ստանում է հարուստը և՛ իր բանեցրած կապիտալից (անասունների մէջ), չը նայած որ աշխատողը շատ անգամ հազիւ իր կեանքն է կարողանում ապահովել... Պարսկական իշխանութեան ժամանակ այս տեսակ միակողմութիւն չը կար և վերը նշանակուած անարդարութիւնը տուրքի բաժանման վերաբերմամբ հարուստների ու աղքատների մէջ անպայման վերագրելու է «ծխահարկի» սկզբունքին: Ընդունուած լինելով պետութեան կողմից, այդ սկզբունքը սկսեց կամայ-կամայ արմատ ձգել և գիւղացիների հայեցողութեան մէջ, սկսեց փոխել հին, աւելի արդարացի սովորութիւնները: Տարաբախտաբար ինչքան էլ մեծ լինէր այս անարդարութեան նշանակութիւնը, այդ դեռ հարցի մի կողմն էր միայն: Հարկային նոր սխառէմի ամենաէական կողմերից մէկն էլ այն էր, որ եղած բոլոր բազմատեսակ տուրքերն ու հարկերը վերածուեցին զրամի: Դրանով ստեղծուեց գիւղացու համար մի անսովոր դրութիւն, որով տուրքը վճարելու համար նա ստիպուած էր ծախել ստացած մթերքների մի մասը: Բայի ժամանակի կորուստից, ծախելու համար, ամեն մէկ գիւղացի կամայ-ակամայ պիտի տուժէր իրան անձանօթ առևտրական առպարէզի մէջ, ստիպուած պիտի ծախէր մթերքները, երբ պահանջոււմ էր հարկը, ինչքան էլ ցած լինէր բերքի արժէքը: Այսպիսով, կամայ-ակամայ գիւղացին ընկաւ առևտրական ուղիի մէջ, վերջինիս բոլոր վտանգաւոր ու փնասակար կողմերով: Այն շրջանների համար, ուր գիւղացիք այդ ժամանակները արտահանելու մթերքներ ունէին և ունենում էին ձեռքերին զրամ (չերամապահութեամբ, այդեղործութեամբ պարապող գիւղերում), հարկի զրամի վերածելը,

հարկաւ, կարող էր միմիայն ցանկալի լինել: Բայց այդ տեսակ վայրերը չատ չէին. 50 տարի մեզանից առաջ երկրի մեծ մասը գտնուում էր դեռ ևս «նստուբար» անտեսութեան շրջանում— երբ ապրուստի համար անհրաժեշտ իրերը ստացւում էին իր ընտանիքի մէջ:

Ակներն պիտի համարել որ այդ՝ գլխաւորագէտ հողագործութեամբ պարագող, շրջանների համար վճարելիք տուրքի դրամի վերածելը պիտի լինէր անձեռնտու: Մանաւանդ որ տուրքերի դրամի վերածելը ստեղծեց գիւղացու համար և մի այլ անյարմարութիւն: Ի՞նչ անէր հողագործը այն տարին, երբ ստացուած բերքի քանակութիւնը պակաս էր միջակից, երբ գները ցած էին միջակից, երբ կարկուտը, մորեխը, տոթը ոչ-ընչացնում էին նրա սպասելիքը, երբ ազարը կոտորում էր տաւար-ոչխարը, հիւանդութիւնը զրկում նրան իր սիրելիներից և պակասեցնում աշխատաւոր ձեռքերը: Չը նայած գիւղացու ստացուածքի ու եկամուտի սովորականից 23 անգամ պակասուելուն, նա ստիպուած էր այդ պարագաներում վճարել այն տուրքը, ինչ որ լաւ և միջակ տարին: Ամեն մի պատահար այդ պարագայում ընտանաբար աւելի էր հողագործին ընկճելու, աւելի էր դցելու նրան վաշխառուի ձանկը, քան կարող էր լինել խանջական կարգերի ժամանակ, երբ եկամուտը պակասելիս պակասում էր տուրքը, և ընդհակառակը:

Ժողովում ենք մի կողմ՝ այն ահագին նշանակութիւն ունեցող երևոյթը, որով արքունական շտեմարանները հանդիսանում էին մի տեսակ պահեստներ սովի ու հացի գների բարձրանալու առաջն առնելու համար. վերջի տարիների դառը փորձերը, երբ անբերրիութիւնից մնասուած տեղերը չեն կարողանում ստանալ փոխարինաբար իրանց պակասի $\frac{1}{2}$, $\frac{1}{3}$, $\frac{1}{10}$ -ը, երբ դժուար է ազատուել նոյնիսկ տարեկան տուրքից, իսկ նպաստ ստանալու յաջողութեան պարագայում նոյն տուրքը ժողովում է բարդուած տոկոսների հետ միասին—չատ լաւ ապացոյցներ են հին սիւստէմի չարձանագրուած առաւելութիւնների:

Հին բէժիմի չարձանագրուած առաւելութիւններից մէկն էլ այն էր, որ առաջ համարեա բոլոր տուրքերը ուղղակի էին, յայտնի և պարզ ամեն մէկի համար: Ուղղակի տուրք վճարելիս ամեն մէկը գիտէր թէ ինչ է տալիս, ինչու համար. նա միջոց ունէր քննութեան ենթարկելու իր վճարածը հարեանի վճարածի համեմատութեամբ: Տուրքի բարձրացնելը ամեն մէկ կոպէկով ակնյայտնի կերպով ընկնում էր նրա ուսի վրայ, ստիպում էր նրան մտածել, ցոյց տալ վարչական մարմիններին նոր տուրքի

սխալ կամ անարդարացի կողմերը: Այդպիսով ամեն մէկը որոշ չափով վերաբննող էր հանդիսանում եղած հարկային սիստէմին և որոշ չափով էլ ուղղութիւն տալիս նրան:

Ծխահարկի սկզբունքի ընդունելուց յետոյ ուղղակի հարկերի բարձրացուելուն սահման տրուեց: Երբ որևէ աղքատ գիւղ (չը նայած բոլոր ձեռք առնուած միջոցների) չէր կարողանում եղած հարկերը վճարել, երբ չունեորների վճարելիքը ընկնում էր ունեորների ուսին և վերջինները բողոք էին բարձրացնում այդ «անարդարութեան» դէմ—ինքն ըստ ինքեան պարզ էր համարում որ ապառիկների աւելանալը և գիւղացոյց բողոքը ապացոյց է տուրքի բարձրացնելու անկարելիութեան: Եւ այդ վերադրում էր ոչ միայն անկարող աղքատների ու չքաւոր գիւղին, այլ ամբողջ յրջանին, չը նայած որ չունեոր գիւղին կից կային շատ հարուստ գիւղեր, չը նայած որ 5 ու վճարելու անկարողները ունեն հարևաններ, որոնք հեշտութեամբ կարող են վճարել 50, 100, նոյն իսկ 500 ուրլի տուրք:

Սակայն, «ծխահարկի» սկզբունքի ժամանակ վերջի հանգամանքը պարզել պետութիւնն անկարող էր: Տուրքի բարձրացնելը այս կամ այն հարուստ գիւղում, այս կամ այն ունեոր ընտանիքների վրայ առանց «ծխի» վրայ հաստատուած ամբողջ հարկային ձևի փոփոխութեան, անկարելի էր: Այդ կը տանէր դէպի մեծ գեղծումներ: Իսկ պետութեան կարիքները արագ կերպով մեծանում էին, պետութեան տնտեսական կեանքը իր չրջանի մէջ էր առնում հասարակութեան տնտեսութեան նորանոր ճիւղեր: Պետութիւնը, անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու համար, հարկադրուած էր դիմելու եկամուտի նոր աղբիւրների: Լիյդ տեսակ աղբիւրներ հանդիսացան կողմնակի անուանակալ տուրքերը և սեփական ձեռնարկութիւնները: Դրանց վրայ էլ պետութիւնը սկսեց աւելի և աւելի ծանրանալ: Հաստատուեցին գոյութիւն չունեցող տուրքերի նոր ձևեր—ակցիդ օղիի, ծխախոտի, նաւթի, լուցկիի վրայ, հարկ արդիւնաբերուող չաքարի և այլ պիտուքների վրայ, անշափ բարձրացուեցին արտասահմանից ներմուծուող մթերքների մաքսը, ծանրացաւ զինուորական տուրքը, միմեանց յետևից պետութիւնը սկսեց ձեռք գցել փոստ-հեռագրատուները, երկաթուղիները, օղիի մենաւաճառութիւնը: Մեր նախագծից զուրս է մանրամասնօրէն կանգ առնել այս ամեն կատարուած փոփոխութիւնների վրայ: Բաւական է իբրև օրինակ յիշել, թէ ինչ չափով էր բարձրանում Երևանեան նահանգի Գեօրչայ լճի ձկնորսութեան իրաւունքից ստացուող տուրքը, որի հետ միասին բնականաբար բարձրանում էր և ձկն արժէքը:

Պ. Զօլտայեւի ասելով, որ 1894 թուին վերահսկում էր լճի ձկնորսութեան աղբիւրների վրայ՝

1828—29 թթ.	լիճը կապալով տրուած էր	480	ռուբլով.
32—36 »	»	»	1,220 »
1846 թուին »	»	»	4,055 »
1856—59 թթ.	»	»	7,600 »
1862 թուին »	»	»	11,316 »
72—75 թթ.	»	»	18,639 »
76—80 »	»	»	23,893 »
80—84 »	»	»	21,400 »

Այսինքն՝ ամեն 10 տարի լճի կապալադրամը համարեա կրկնապատկուում էր, իսկ 1829 թուից մինչև 1893-ը նա աւելացած էր 50 անգամ. կապալառութեան գումարի հետ միասին բարձրանում էր և ձկան գինը: 40-ական թուականներին, օրինակ, իշխան ձկի 100-ը լճի ափին արժէր 150—250 ռ., իսկ 1893 թուին արդէն 750—10 ռ. բարձրանալով հասաւ մինչև 30-ի և նոյնիսկ 60 ռ.:

Ձկնորսութիւնը միակ աղբիւրը չէր, ի հարկէ, ուր պետութեան ստանալիքը բարձրանում էր այդպէս արագ կերպով: Նոյնը կատարւում էր և միւս պետական սեփականութիւնների վերաբերմամբ:

Օգտուելով այն հանգամանքից, որ տուրքը չի վերցւում ուղղակի կերպով սպառողից, ու այդ տեսակ քողարկուած հարկը առաջ չի բերում լսելի դժգոհութիւններ—պետութիւնը բարձրացնում էր այդ տեսակ տուրքը մինչև այն աստիճան, երբ տուրքի նոր բարձրացնելը դադարում էր աւելացնել եկամուտը, ստեղծում էր նորանոր ձևի մոնօպօլիաներ: Դրա մէջ չը կասկածելու համար բաւական է բերել այստեղ, թէ ինչ աղբիւրներից էր կազմուած ռուսաց պետութեան ամբողջ եկամուտը վերջի տարիների ընթացքում: Օրինակի համար վերցնենք 1900 թիւը: Այդ տարին պետութիւնը ունէր եկամուտ *)).

Ի ն չ ձ ի լ ղ ե Ր Ի ց:	Ընդամենը	Միջին	0/00:
	միլ.	թուով մէկ անձի **)	
	ռուբլի:	վրայ ռուբլի:	

I. Ուղղակի տուրքեր (հողային և անշարժ կալուածք. 451, վաճառակ. պարապելու իրաւունքից 511, եկամուտ բերող կապիտալից (162) .	1204	093	690/0
--	------	-----	-------

*) Русский календарь Суворина за 1901 г.

II. Կողմնակի տուրքեր (ոգելից ըմպելիքներից 2930, ծխախոտից 376, շաքարից 613, նաւթից 245, լուծակից 68, մաքսատներից 2179)	641 ₁	493	366 »
III. Հարկեր (պայմանագրերի, դատատանական 354, մէկից միւսին անցնող կալուածքներից 256, այլնայլ 238)	848	065	48 »
IV. Պետութեան արտօնութիւններից (պօստային և հեռագր. 480, օղիի մենավաճառումից 1181, լեռնային, դրամական 71)	1737	134	99 »
V. Պետութ. հարստութիւններից (կապալով տրուող հողերից 169, անտառներից 467, երկաթուղ. 3309, գործարաններից 282)	4233	326	240 »
VI. Գիւղացիների վճարելիքները աղնուականներից առած հողի արժէքի փոխարէն	777	060	44 »
VII. Պետութեան կողմից արած ծախսերի վերադարձումը	669	052	38 »
VIII. Այլնայլ եկամուտներ (Արտակարգ եկամուտներ (մնացորդ կայն)	58	004	03 »
	1636	105	93 »
Ընդամենը	1757	1352	1000 ⁰ / ₀

Այդ աղիւսակից ակներև է, որ XIX-րդ դարի վերջին պետութեան ստացած ամբողջ եկամուտի կէսը (երկաթուղիներից, փօստատներից, օղիի մենավաճառութիւնից և այլն) չուներ տուրքի բնաւորութիւն: Դրանք ստացւում էին արդիւնաբերական ձեռնարկութիւններից, որոնք թէև տալիս էին եկամուտ, բայց պահանջում էին և ծախսեր համարեա նոյն չափով... եկամուտի միւս կէսը կազմուած էր մօտ 366⁰/₀ (493 կ. անձնաւորութ. վրայ. կողմնակի տուրքերից, 69⁰/₀ (93 կ. անձն. վ.) ուղղակի տուրքերից և 48⁰/₀ (45 կ. անձն. վ.) այն հարկերից, որ տրւում էին եկամուտի համեմատ: Այսպիսով իսկական տուրքերի համարեա $\frac{3}{4}$ մասը ընկնում էր «կողմնակի տուրքերի» վրայ.

Առանց մանրամասն բացատրութիւնների, կարծեմ, պարզ

*) 1897 թուին Ռուսաստանում հաշւում էր 130 միլ. բնակիչ:

է, թէ ինչու՞ն է կայանում «կողմնակի տուրքերի» իմաստը: Օղիի, ծխախոտի, նաւթի, լուցկու վրայ ծանրացող տուրքը ընկնում է հաւասարապէս բոլորի վրայ, ինչպէս միլիթանտէր հարուստի, նոյնպէս և օրավարձով ապրող մշակի: Զէ որ 10 անգամ գիւղացուց ու արհեստավորից աւելի եկամուտ ստացող քաղաքացին 10 անգամ աւելի օղի ու ծխախոտ չի գործածում, 10 անգամ աւելի լուցկի, նաւթ չի վառում: Միլիթանտներ ունեցող հարուստը աւելի շաքար չի գործածում, քան ոռճիկով ապրող ուսուցիչը, և երկուսի ծախսն էլ զինուորակոչութեան վրայ *) հաւասար է, չը նայած որ առաջինի միջոցներն ու եկամուտը 10, 20, 100 անգամ աւելի բարձր են, քան երկրորդինը: Համեմատելով պարսկական ըէփմի ժամանակ գոյութիւն ունեցող հարկատիրական ձեւը (երբ հարկերի միայն $\frac{1}{10}$ -ը կազմում էին կողմնակի տուրքերը) նորի հետ (իր $\frac{3}{4}$ կողմնակի տուրքերով), անկարելի է չը խոստովանուել որ XIX-րդ դարուայ ընթացքում հարկային դրութեան կրած փոփոխութիւնը դէպի կողմնակի հարկերի ուժեղանալը, կարող էր միմիայն նպաստաւոր լինել հարուստների ու քաղաքացիների համար ի վնաս աղքատների և գիւղացիների:

ԳԼ. VI

Նոր հարկային սխաւէմի բացատրական կողմերը. քաղաքների ուժեղանալը ի վնաս գիւղերի. գիւղական պրօլետարների առաջ գալը և շատանալը. — Երեք Ախտա թաշուր ու ձալա, Սաղեան և Քանաքեռ գիւղերի օրինակները. — Տնտեսական անհասարակութեան հետեանքները:

Դժուար չէ նախատեսել թէ ինչ կորստաբեր հետեանքներ պիտի ունենար այս տեսակ սխալ — եթէ Հասենք աւելին — հիմքերի վրայ դրուած հարկատիրական սխաւէմը:

Մի քանի անգամ քաղաքացուց աւելի աղքատ գիւղացին, լինելով համարեա չորս անգամ քաղաքացուց աւելի ծանրաբեռնուած տուրքերով (1285 և ծխի վրայ 444 ոտւրլու տեղ), հարկաւ տարէջ տարի համեմատաբար պիտի աւելի աղքատանար, պիտի աւելի ընկճուէր քաղաքացու առաջ: Դրա հետեանքը մենք տեսնում ենք ակներև: Այն ժամանակ, երբ Կովկասի գիւղերը մնում են համարեա նոյն ցեխի, աղքատութեան ու

*) Ի նկատի ունենալով այն, որ ամեն տարի գէնքի տակ կանգնած է Ռուսաստանում մօտ 1,000,000 զինուոր, որից ամեն մէկը, ազատ դէպքում, կարող էր ստանալ մօտ 100 ռ., զինուորագրութեան ծախսը հաշուելու է մօտ 100 միլ. ռ. (77 կոպ. անձնավարութեան վրայ):

տգիտութեան մէջ, ինչ որ 50 տարի առաջ, քաղաքները ծածկուել են գեղեցիկ, բազմաթիւ շինութիւններով, ունեն եւրոպական ամեն տեսակ յարմարութիւններ: Էլեքտրական լուսաւորութիւնը, ջրանցքները, թանգարանները, թատրոնները, բազմաթիւ կրթական հիմնարկութիւնները կամաց-կամաց ոչնչացնում են այն մեծ տարբերութիւնը, որ 50, 100 տարի առաջ կար կովկասի և Եւրոպայի քաղաքների մէջ:

Քաղաքացի բուրժուաները, արիստոկրատները և նոյնիսկ աղատ պարագմունքներով զբաղւողները իրանց հարստութեամբ, եկամուտով, նիստուկացով յետ չեն մնում եւրոպացիներից: Մի տարուայ ընթացքում մեր քաղաքները կրեցին այնչափ փոփոխութիւն, որի համար Եւրոպայում պահանջուեց մի քանի դար:

Բայց ինչ խորը անդունդ մեր գիւղացու և բանուորի ու նրա հակատիպար եւրոպացի բանուորի և գիւղացու մէջ:

Առաջինը հագնուած է ինչ-որ ցնցոտիների մէջ, կերակրւում է ցամաք հացով սոխի ու պանրի կտորի հետ. նրա ստանալիք օրական 40—60 կ. վարձը զրոյմուած է դունատ դէմքի վրայ: Երկրորդը չի ուտում ճաշ առանց մսի ու գինու, հագնուած է մաքուր և քաղաքավարի. նրա դէմքը չէր կարող լինել այնքան զուարթ, կենդանութիւն ու ոյժ արտայայտող, աչքերը չէին լինիլ այնքան փայլող, եթէ աշխատաւորը օրական ստանալիս չը լինէր $1\frac{1}{2}$, 2, 3 ռուբլի:

Ենթոյնի գիւղացու անապահով վիճակի և ընդհակառակը քաղաքացու ապահովութեան, չնորհիւ գիւղացու ուղղակի և կողմնակի հարկերով ծանրաբեռնուած լինելուն համեմատած քաղաքացու հետ, վերջինս պահում է գիւղացուն տնտեսական կախման մէջ, ստանում է գիւղացուց չնչին գնով նրա աշխատանքը, ձեռք է գցում անասունները, գրաւ է առնում հողերը:

Տարէց տարի աւելանում է քաղաքների հարստութիւնը, տարէց տարի դրա հետ միասին աւելանում է և գիւղերի կախումը քաղաքներից: Մասամբ դրանով և քաղաքների հարկերի թեթևութեամբ է բացատրւում այն հանգամանքը, որ ամեն մի քիչ թէ շատ «աչք բաց անող» գիւղացի տեղափոխւում է քաղաք:

Չը նայած նրան որ բնական աճումը գիւղերում աւելի բարձր է քան քաղաքներում (1894—97 թթ. տարին 164 և 109%*), 1886—87 տասնամեակի ընթացքում Անդրկովկասի բոլոր քաղաքների բնակիչների թիւը 463% հազարից հասած է

*) Кавказский Каледнаръ, 1901.

694₅ հազարի, այսինքն աւելացած 231 հազարով կամ 498⁰/₀—ով, իսկ գիւղերինը 4239 հազարից հասած է մինչև 4822 հազարի, որ տալիս է միմիայն 135⁰/₀ (573 հազ.)։ աւելացումն ամենապարզ ապացոյց է որ քաղաքների տնտեսական դրութիւնը անհամեմատ աւելի նպաստաւոր է քան գիւղերինը, որի պատճառով գիւղերից ժողովուրդը կամաց-կամաց գաղթում է դէպի քաղաքները։

Նոյնանման բացասական ազդեցութիւն ունեցաւ նոր հարկային դրութիւնը գիւղերի աղքատակալութեան վրայ։

Շնորհիւ կողմնակի տուրքերի ուժեղանալուն (ուղղակի տուրքերի փոխարէն), շնորհիւ «Միսահարկի» սկզբունքի (եկամուտի տեղ) հարկերի ամենամեծ ծանրութիւնը ընկաւ աղքատ տարրի վրայ։ Եթէ հարուստը կարողութիւնից կամ եկամուտից վճարում էր տարին 1—25⁰/₀, միջակ գիւղացին ծանրաբեռնուած էր 3—5,15⁰/₀—ով, իսկ աղքատը—նոյն իսկ—10, 20, 30⁰/₀—ով։ Գտնուելով այդչափ աննպաստ պայմաններում, աղքատը՝ տարէջ տարի պիտի աւելի աղքատանար, աւելի ընկնէր իր դիրքից, իսկ հարուստը ընդհակառակը։ Չը կարողանալով տարեկան եկամուտով ծածկել տարեկան ծախքերը տուրքերի հետ միասին, աղքատը խրոււմ էր պարտքերի մէջ, վճարում էր հարուստին սարսափելի տոկոսներ, ծախում էր սկզբում ոչխարը, կովը, իսկ յետոյ և եզը։

Չրկուելով լծկանից նա արդէն դուրս էր ընկնում հողագործների շարքից։ Ծախում էր այգին, տունը, գրաւ դնում վարելահողը և ստուարացնում գիւղացի պրօլետարների շարքը։ Ամեն մի պատահար՝ երաշտ, կարկուտ, ժանգ, ազար, հիւանդութիւն արագացնում էր այս ընթացքը, շատացնում էր պրօլետարների թիւը, գցում էր աղքատների շարքը նաև միջակ ընտանիքների մի մասը, որպէս զի վերջիվերջոյ դրանք էլ անցնեն պրօլետարների շարքը։

Եւ այլ կերպ չէր էլ կարող լինել։

1892—94-ի անբերրիութեան ժամանակ ինձ շատ հետաքրքրեց երեք միմեանց հարեան գիւղերի տարբեր վիճակը։ Այդ գիւղերն էին՝ Նոր-Բայազէթի գաւառի վերին, Ներքին և ուսաց Ախտաները։ Երեք անբերրի տարիների վերջում յիշուած գիւղերի վիճակի մասին անփոփ գաղափար տալիս է հետևեալ աղիւսակը *):

*) „Опытъ изслѣдов. сельскаго хозяйства Эрив. губ. и Кареск. Обл.

Գիւղերի վիճակը 1894-ի վերջը:		Վերին Ներքին Ռուսաց Ախտա. Ախտա. Ախտա.		
Միջակ անձի վրայ ցանքս էր առուած				
քառ. սաժ.	.	240	360	1560
Ցանքսը սովորականից (1892-ից) պակաս-				
սեցրած էր 0/00/0	.	72	67	7
Ցանքս չարած գիւղաց. թիւն էր 0/00/0	.	40	17	6
Լծկան չունեցող » » » »	.	51	26	0

Ահագին տարբերութիւն երեք հարեան գիւղերի մէջ, երբ սկսեցի հետաքրքրուել այդ տարբերութեան պատճառներով, ինձ համար պարզուեց որ դա հողի անհաւասար բաժանումն էր երեք գիւղերի մէջ, որից առաջ էր գալիս անհաւասար եկամուտ և հարկի անհաւասար ծանրութիւն: Եւ իսկապէս, չը նայած Վերին-Ախտայի հողերի աւելի բարձր և վատ դիրքի, քան Ներքին-Ախտայի և վերջինի հողերի աւելի քարոտ լինելու, քան ռուսաց Ախտայի, երեք գիւղերի մէջ ամեն մի բնակչի վրայ հաշոււմ էր.

Հող, եկամուտ և այլն:		Վերին Ներքին Ռուսաց		
		Ա	Խ	Մ
1886-ին վարելահող դեռեալներն . . .		069	093	144
» հող առհասարակ դեռ. . .		127	139	482
1894-ին հող բաժանուող քառ. սաժ. . .		1260	1716	2280
Միջակ տարուայ ցանքսի տարածութ.				
քառ. սաժ.		900	1080	1680
Միջակ տարուայ հողագործ. ստացուած				
եկամուտը ո.		26 ²⁴	31 ⁰⁹	45 ⁹⁴
1886-ին տուրքերի քանակ. անձի վրայ ո. . .		152	186	224
Տուրքերը կազմում էին հողագործ. եկա-				
մուտի 0/00/0-ը		580	590	490

Արտաքրուտ էլ գիւղերը շատ տարբերոււմ էին միմեանցից. ռուսաց Ախտայում բոլոր տները նոր ձևի էին, ծածկուած կըրամիտով, Ներքին-Ախտայում այդ ձևի տները մի քանիսն էին, Վերին-Ախտայում—ոչ մէկը...

Նոյն տարբերութիւնը և ընտանեկան բարեկեցութեան մէջ, նրանց ապահովութեան, անասունների, կահ-կարասիքի, գիւղատնտեսական գործիքների մէջ: Նկատուած տարբեր ապահովութիւնը չէր կարող և տարբեր ազդեցութիւն չունենալ անբերրիութեան տարիները: Հարուստ ռուս ախտեցիներ աշտի ժամանակ կարող էր չաւելացնել իր հարստութիւնը. կարող էր ծախել մսացու ապրանքը, անցնալ տարիներից մնացած ցորենը, կարող էր աւելացնել ֆուրգոն բանացնելը: Մի խօսքով

նա կը տուժէր շատ քիչ, որ և ապացուցանում են վերը բերած թուերը:

Միջակ դրութիւն ունեցող ներքին-ախտեցին անցեալ տարիներէն մնացած ցորեն չունի (ցանածը հազիւ է իրան բաւականանում), մսացու մի քանի ոչխարն ու տաւարը հազիւ բաւականութիւն է տալիս նրան անբերրութեան առաջի տատարին, սայլապանութեամբ պարապողը լծկանի թուլանալու պատճառով չի կարողանում ստանալ եկամուտ բեռնակրութիւնից: Կամայ-ակամայ նա կիսով չափ ուտում է տան կահ-կարասիքը, կիթան տաւարը, լծկանը և սերմացուն... Անբերրութեան վերջը ցանքը գիւղում պակասում է $76\frac{0}{10}$ -ով, լծկան չունեցող-ների թիւը բարձրանում է $26\frac{0}{10}$ -ի, որի չնորհիւ հողագործ գիւղերում ազգաբնակչութեան $17\frac{0}{10}$ -ը զուրկ է հանդիսանում բոլորովին ցանքսերից:

Աւելի ծանր է Վերին-Ախտայի վիճակը: Սա աղքատ է նոյնիսկ միջակ տարին: Ցորենի պաշար սա չունի, ոչխարն ու մսացու ապրանքը, ինչպէս և ընդհանուր ապրուստը այստեղ պակաս է ներքին-Ախտայից: Երաշտի հէնց առաջի տարուանից գիւղացու տնտեսութիւնը սկսում է քայքայուել: Գոյութիւնը պահպանելու համար գիւղացին ծախում է ոչ միայն անասուններն ու հողերը, այլ և պղինձը, վերջի փախար, տան գերանները: Հայրենի գիւղը թողնելով գիւղացին փախչում է գէպի աշխատանքի տեղը, իսկ կիներն ու երեխաները պատսպարւում են հարկանի ախոռի անկիւնում: Զարմանալի չէ, որ անբերրութեան երրորդ տարուայ վերջը այդ գիւղում ցանքը պակասած է $72\frac{0}{10}$ -ով, լծկան չունեցողների թիւը հասած է $51\frac{0}{10}$ -ի, սեփական հասկին կարօտ է ազգաբնակչութեան $40\frac{0}{10}$ -ը:

Եւ այսպէս լինում է ամեն տեղ, ամեն տեսակ աղէտների ժամանակ: Թոյլը ընկնում է ամբողջովին, միջակը թուլանում է, ուժեղը զիմանում և նոյնիսկ հարստանում, օգտուելով թոյլի անել վիճակից:

Նոյն 1892—94 թուականներին, երբ երաշտից տուժում էր Երևանեան նահանգի լեռնային մասն ընդհանրապէս, կային հարուստ գիւղեր և մանաւանդ անհատներ, որ իրանց կարողութիւնը կրկնապատկեցին: Հացով առատ գիւղերն ու հարուստները $1\frac{1}{2}$ ուղերով ծախում էին կարօտեալներին այն ցորենը, որ միջակ տարին արժէ միայն 70—80 կոպ., կամ որ ժողոված էին առատութեան ժամանակ 50—60 կոպէկով: Ունեւորները մինչև 30, 50-ի բարձրացրած տոկոսով տալիս էին չունեւորներին հաց, կամ զրամ, կէս գնով առնում էին նրա կովը, եզը, տան կահ-կարասիքը, կէս հաշուով վերցնում աղքատներից վեր-

ջիններին ապագայ հունձը, խոտհարքներից սպասուող խոտը... Այն ժամանակ, երբ տուժած չըջանի ցանքսի տարածութիւնը պակասած էր 20, 30 և նոյնիսկ 40⁰/0-ով, շատ գիւղերում կային հարուստներ, որոնք «կիսով» կամ այլ պայմանով ցանել էին չունևորների հողերը և այդպիսով կրկնապատկել, եռապատկել իրանց եկամուտը...

«Վայ յաղթողներին», գոչում են յաղթողները պատերազմի ժամանակ. «վայ չունևորներին», մտածում են ունևորները չունևորների մասին խաղաղ ժամանակ և իրանց ձեռքը գցում աղքատ եղբոր ու հարևանի տաւարն ու ոչխարը, տան կահ-կարասիքը, հողերը, նրա ապագայ աշխատանքը:

Անհաւասարութիւնը մեր գիւղերում աճում է օրէցօր, աւելի և աւելի խորը դարձնելով աղքատների ու հարուստների մէջ եղած տարբերութիւնը:

Գորուայ գաւառի Սաշուրի և Ճալա վրաց գիւղերում հարկատիրական ձևը կազմուած է լիտրա-չարէքի սկզբունքի վրայ: Բայց Սաշուրին գտնւում է Միխայլովկա կայարանի մօտ, գիւղացիները թողած են հողագործութիւնը և ընկած արհեստավանդակաճանկան ուղղի մէջ, իսկ Ճալան դեռ ևս շարունակում է իր նահապետական դրութիւնը, ապրելով հողագործութեամբ: Եւ տեսէք ինչ մեծ տարբերութիւն երկու հարևան գիւղերի ընտանիքների կարողութեան աստիճանների մէջ *):

Ընտանիքների կարողութեան աստիճանները:	Ճ ա յ ա թիւ 0/00	Սաշուրի թիւ 0/00
4—3 չարէք . . .	26—27 ⁰ /0	— —
3—2 » . . .	14—15	2—4 ⁰ /0
2—1 » . . .	10—10 ⁵	14—32
1 չարէք—1 լիտր . . .	35—37	28—63 ⁵
Հարկ չը վճարողներ . . .	10—10 ⁵	0—0
Ընդամենը . . .	95—100 ⁰ /0	44—100 ⁰ /0

Համեմատելով հողագործութեամբ պարապող Ճալա գիւղը հարևան արհեստա-առևտրական ուղղի մէջ ընկած Սաշուր գիւղի հետ, մենք ակներև տեսնում ենք, որ Սաշուրում, համեմատած Ճալայի հետ, հարուստների («լիտրա» կարգի) թիւը 27⁰/0-ից ընկած է 0⁰/0-ի. ունևորների (2—3 չար.) 15⁰/0-ից իջած է 4⁰/0-ի. միջակ ընտանիքների թիւը (2—1 չար.)—10⁵/0-ից բարձրացած է 32⁰/0. չունևորների (1 չար.—1 լիտր)—47⁵/0-ից—63⁵/0:

*) Թուերը վերաբերում են 1892 թուին:

Բացի դրանից, «նահապետական» ձախյում ամենաաղքատ ընտանիքները (թուով 10 կամ 10⁰/₀) ազատուած են բոլորովին տուրքից, իսկ «առաջադիմած» և զարգացած խաշուրում տուրքի են ենթարկուում և ոչինչ չունեցող որբերը: Խաշուրի և ձախյի համեմատութիւնը պարզաբանում է բնորոշ կերպով այն արագ փոփոխութիւնը, որ առաջ է գալիս գիւղերում վաճառականական ուղղութեան զարգացման հետ միասին:

Նոյն փոփոխութիւնները, թէև քիչ մեղմ չափով, մենք տեսնում ենք և այն գիւղերում, որոնք արտաքուստ չեն ենթարկուում այդ տեսակ փոփոխութեան:

Շամախի գաւառի հայաբնակ Սաղեան գիւղում ազգաբնակչութիւնը վաղուց ի վեր ապրում է համարեա թէ միմիայն այգեգործութեամբ և գինեգործութեամբ: Այգիները բաժանման մասին գիւղի ընտանիքների մէջ մենք ունենք տեղեկութիւններ 1889 և 1901 թուականներին վերաբերեալ *):

Հետեւեալ աղիւսակը տալիս է բաւական ճիշտ գաղափար: Թէ ինչ փոփոխութիւն է կատարուած Սաղեան գիւղի ընտանիքների տնտեսական դրութեան մէջ վերջի 12 տարուայ ընթացքում:

Այգիների տարածութիւնը «կապով» կամ «չունով» **),	Ընտանիքների թիւը			
	1889 թիւ	թ. 0/0	1901 թիւ	թ. 0/0
0—10 չուն	72	45 ⁰ / ₀	111	55 ⁰ / ₀
11—20 »	52	32 ₅	55	27 »
21 և աւել »	37	22 ₅	37	18 »
Ընդամենը	161	100 ⁰ / ₀	203	100 »

Ամենահարուստ ընտանիքի

այգին 60 կապ. 68 կապ:

Ակնհերե է, որ վերջի 12 տարուայ ընթացքում այգեգործ Սաղեան գիւղում ամբողջ ազգաբնակչութեան մէջ հարուստ ընտանիքների թիւը 22⁰/₀-ից իջած է 18⁰/₀-ի. միջակ ընտանիքների թիւը 32⁰/₀-ից իջած է 27⁰/₀-ի և ընդհակառակը, աղքատ ընտանիքների թիւը 45⁰/₀-ից բարձրացած է մինչև 55⁰/₀-ը: Միևնոյն ժամանակ պարզ է որ թուով քչացած հարուստ ընտա-

*) 1889 թուին վերաբերեալ տեղեկութիւնները ստացած ենք պ. Ն. Քալաշեանից, որի համար չենք կարող չը յայտնել մեր խորին շնորհակալութիւնը:

**) «կապը» կամ «չունը» հաւասար է 100 քառ. սաժ. հողի տարածութեան:

նիքները 12 տարուայ ընթացքում աւելի հարստացած են: Դա ապացուցւում է նրանով, որ 60 «կապ» տարածութիւնից ամենահարուստ ընտանիքի այգին հասած է 68 «կապի»:

Նոյն բանը մենք նկատում ենք և զուտ հայկական շըրջաններում, այն գիւղերում, որոնց գլխաւոր ապրուստը հողագործութիւնն է: Երևանեան նահանգի Քանաքեռ գիւղում հարկերը բաժանւում են համիա-չարէքի սկզբունքով: Համեմատելով 1887—91 թթ. ընտանիքների կարողութեան դասակարգերը այն դասակարգերի հետ, որ հաստատուած էին 1892-ից, մենք նոյնպէս համոզւում ենք, որ ժամանակի ընթացքում աղքատների թիւը աւելանում է, իսկ հարուստներինը պակասում:

Եւ ճիշտ, կարողութեան զանազան կարգերի ընտանիքների թիւը Քանաքեռում հաւասար էր.

Ինչ կարգի	1887—91 թթ. թիւ	1892—96 թթ. թիւ
4—3 չարէք	29	29
3—2 »	64	67
2— ¹ / ₂ »	104	141
Ընդամենը . 197	1000/0	237 1000/0

Այսինքն Քանաքեռում 5 տարուայ ընթացքում ամբողջ ազգաբնակչութիւնից՝

Ունեւորների թիւնը 150/0-ից իջնում է մինչև 120/0-ի,

Միջակների » 32₅ » » » 28 »

այն ժամանակ, երբ չքաւորների թիւը բարձրանում է 52₅0/0-ից մինչև 600/0-ը:

Հետաքրքրական է և այն, որ չքաւոր դասակարգի մէջ երևան է գալիս նոր կարգ, ամենաչքաւորների (¹/₂ չարէքաւոր), որ 1887-ին չը կար...

Տնտեսական անհաւասարութեան զարգացումը նկատւում է Կովկասի բոլոր անկիւններում, երկրում ապրող բոլոր աղքատութիւնների մէջ, ազգաբնակչութեան բոլոր խաւերում:

100, 50 տարի մեզանից առաջ Կովկասի քաղաքների ամենահարուստ տների կարողութիւնը հաշւում էր տասնեակ և, իբրև բացառութիւն, հարիւր հազարներով: Այժմ ունենք հարիւրաւոր մարդիկ, որոնք չեն էլ ուզում նայել հարիւր հազարի վրայ, և անհատներ, որոնց կարողութիւնը հաշւում է տասնեակ միլիոններով: Եւ այդ հարստութեան կենտրոնանալը անհատների ձեռքին կատարւում է այն ժամանակ, երբ քաղաքացիների ստուար մասը մնում է նոյն աղքատութեան մէջ, ինչ-որ 50, 100 տարի առաջ:

Գիւղերում առաջ են եկել վաշխառուներ, որոնցից կախում ունեն ամբողջ շրջաններ. կան հարուստներ, որոնց այգիների տարածութիւնը հասնում է հարիւրաւոր դեսեատինների, իսկ խոշոր անասունները հաշւում են հազարներով... Եւ այդ ուղղութիւնը քանի գնում աւելի ուժեղանում է, աւելի խոր արմատներ գցում կեանքի մէջ, աւելի մեծ զօրախտութիւնների պատճառ դառնում:

Շնորհիւ առաջ եկած ծայրայեղ անհաւասարութեան, չունենորենքը դարձել են ունենորենքի պարտապան. ծախում են իրանց ունեցած-չունեցածը, դարձել են նրանց ծառաներն ու հլու հպատակները: Միլիոնատէր տգէտ, երեկուայ չարչին իր շահերի պաշտպանութեան համար վարձում է, առնում է տասնեակ իրանից բարձր, իրանից խելօք, կրթուած անձնաւորութիւններ, հազարաւոր իրանից մաքուր բանուորներ:

Մի հարուստ վաշխառուի ձայնը գիւղերում աւելի լսելի է, քան տասնեակ աշխատասէր, մաքուր, խելօք, բայց աղքատ գիւղացիների: Անկիրթ միլիոնատէրը քաղաքներում աւելի ազդեցութիւն ունի, քան հարիւրաւոր միջակ վաճառականներ, հազարաւոր ագնիւ բանուորներ:

Կախուած լինելով հարուստի կամքից, աղքատ գիւղացին, բանուորը, վարձուող ինտելիգէնտը զգում են իրանց ստորադրեալ վիճակը, սկսում են մի առանձին ակնածութեամբ վերաբերուել դէպի իրանց վարձող հարուստը:

Բնականաբար ամեն մէկի մէջ յանկուծիւն է առաջ գալիս դուրս գալ ստորադրեալ վիճակից, ձեռք բերել, «հարստանալ» տասը, հարիւր հազարով: Նախանձը, հանստանալու տենչը վառում է բոլորին, ստիպում է նպատակին հասնելու համար կանգ չառնել ոչ մի բանի առաջ: Ի՞նչ ասես որ զո՞հ չի բերում դրան՝ և՛ խաղաղութիւն, և՛ կեանք, և՛ պատիւ...

Միթէ կարելի է կասկածել որ ներկայումս կատարուող յանցանքների տասից իննը առաջ է գալիս հարստանալու նախանձի տենչից... Սակայն չը նայած գործ դրուած բոլոր միջոցներին, մարդ անկարելի է լինում հասնել իր գլխաւոր նպատակին—երջանկութեան: «Ապահովութիւն» ու «հարստութիւն» առաձգական խօսքեր են: Դրանք նման են գեղեցիկ ծիածանին, որ գոյութիւն ունի միայն այն ժամանակ, երբ նրան նայում եւ որոշ հեռաւորութիւնից: Տասը, հարիւր հազարը արժէք ունի այն մարդու համար, որ ոչինչ չունի, կամ միայն հազար ունի: Տասը սենեակից բնակարանը, չորս տեսակ կերակուրից ճաշը իդէալ է նրա համար, ով ապրում է 2—3 սենեակում,

ով ճաշում է 2 տեսակ կերակուրով: Երբ հունկորը հասնում է իր փափագին և ձեռք է գցում իր երազած 10, 100 հազարը, երբ նա բնակութիւն է հաստատում հարուստ տան մէջ և ուտում նուրբ կերակուրներ,—առագ կերպով նա ընտելանում է այդ 100 հազարին ու կենցաղավարութեանը և նոյն տենչով ու անհանգստութեամբ ձգտում է դէպի 1, 10, 100 միլիոններ, դէպի պալատներ, Լուկուլլոսի ճաշկերոյթներ:

Հարստանալով մարդս հանգստութիւն չի գտնում, երջանկութիւն չի գգում:

Լուկուլլոսի ճաշկերոյթները, չքեղ պալատները, զուարճութիւնները բաւականութիւն են տալիս նրան մի ամիս, մի տարի: Ամենայն դիւրութեամբ նա յագեցնում է և իր միւս անասնական հակումները: Կշտանալով այդ ամենից, նա բթանում է, ընկնում այն հոգեկան դրութեան մէջ, որի մէջ է չաղացած ու ճահիճների ցեխի մէջ թաւալուած գոմէշը... Երկուսի անասնական ու ֆիզիկական հակումներին էլ՝ տրուում է լիակատար բաւարարութիւն և երկուսն էլ կամաց-կամաց կորցնելով ընկան կեանքի հոգեկան, աստուածային զգացումները, դառնում են... կենդանի մեռածներ: Խրուելով ֆիզիկական ու անասնական զուարճութիւնների մէջ, հարուստը չի հասկանում, որ իր ձեռք բերած ոյժի, հարստութեան ազդեցութիւնը կարող է տարածուել միմիայն ֆիզիկական բարիքների վրայ. նա չը գիտէ, որ այդ ֆիզիկականից զուրս են մարդուս ամենամեծ բարիքները, իսկական երջանկութիւնը, որ տալիս են հոգեկան ու մտաւոր հարստութիւնները—գիտութիւնը, գեղեցկութիւնը, սէրը դէպի եղբայրը, դէպի ժողովրդի բարօրութիւնը:

Դժբախտաբար այս հոգեկան դրութիւնը չի հասկանում հարուստի հետ և ամբոխը: Նա չը գիտէ, որ հարստութիւնը աղի ջուր է, որ խմելով կարելի է միայն աւելի ծարաւել: Ժողովուրդը ղեկավարւում է միայն արտաքին փայլով և հարստանալը բոլորի համար դարձած է մի տենչ, որ հանգստութիւն չի տալիս ոչ ցերեկ, ոչ գիշեր, բայց որ տանում է դէպի հոգեկան մեռելութիւն:

Ոսկին դարձել է մեր կեանքի միակ ղեկավարը:

Նրա առաջ խոնարհւում է ժողովրդի ղեկը ձեռքին ունեցող բարձր պաշտօնեան, նրա առաջ կորցրել են իրանց նշանակութիւնը բոլոր մինչև օրս ընդունուած առաքինութիւնները—վեհանձնութիւն, հայրենիք, կրօն, բարոյականութիւն, սէր, աշխատասիրութիւն:

Մովսէսի պատուէրը՝ «Թափած քրտինքովդ աշխատիր կերած հացդ»—կորցրել է իր արդարացի և վեհ նշանակութիւնը։

Նազարէթցի Քարոզչի ասածը, թէ աւելի հեշտ է պարանին անցնել ասդի ծակով, քան հարստին մտնել դրախտի դռնով—համարում է անախրօնիզմ։ Այդ մտքին հեգնութեամբ են վերաբերում ոչ միայն հարուստները, այլ և նրանք, որոնք իրանց՝ Մեծ Քարոզչի աշակերտներ են համարում։

Ստեղծուել է մի վտանգաւոր դրութիւն, որ սպառնում է ամեն ինչի—և՛ ժողովրդի բարեկեցութեան, և՛ կրօնին, և՛ բարոյականութեան, և՛ պետութեան։

Ս. ԶԱԽԱՐԵԱՆՑ

(Վերջը յաջորդ համարում)